Հավելված 2
2024թ. «02» «16»-ին
Կնքված N ԴՏՊ-1160-11012/ԼՄՍ-6/24 ԼՂՀ պայմանագրի

# Դրամաշնորհային հաշվետվություն N ԴՏՊ-1160-11012/ԼՄՍ-5/24 ԼՂՀ

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանումը՝** | Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական ծառայություններ ցերեկային կենտրոնում. Ստեփանավան |
| **Դրամաշնորհի N** | N ԴՏՊ-1160-11012/ԼՄՍ-6/24 ԼՂՀ |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | «Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպություն |
| **Ծրագրի իրականացման ժամանակատված** | 01.02.2024 – 31.12.2024 |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01.10.2024 – 31.12.2024 |
| **Ներկայացման օր** | 20.12.2024 |
| **Հաշվետվության պատասխանատու** | Տաթևիկ Ղազարյան<br>Ծրագրի համակարգող |

## 2. Բովանդակային հաշվետվություն

### 2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների շրջանակներում կատարման ենթական գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար

**Միջոցառում 3**. Սոցիալ-հոգեբանական վերականգմանն ուղղված ծառայությունների տրամադրում:
**Միջոցառում 4**. Ապահովել ցերեկային կենտրոնում շահառուների զբաղվածությունը տարբեր հմտություններ զարգացնող խմբակներում:
**Միջոցառում 5.** Հանրային միջոցառումներ և ԶԼՄ լուսաբանում:
**Միջոցառում 6.** Անկախ կյանքի դրական ծնողավարման վերաբերյալ թրեյնինգներ, սեմինարներ երիտասարդների և նրանց ընտանիքների համար:
**Միջոցառում 7.** Իրավաբանական խորհրդատեղեկատվական աջակցություն ընտանիքներին առողջապահական, սոցիալական և կրթական հարցերի շուրջ:
**Միջոցառում 8**. Ազատ ժամանցի և մշակույթային միջոցառումների կազմակերպում:
**Միջոցառում 9.** Ծրագրի մշտադիտարկում և գնահատում:

2.2 **Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի /Գանտի աղյուսակ/ և միջոցառումներ, նշելով՝ Ձեր կողմից կատարված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար:**
**Միջոցառում 3**. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 3/-ի թվով 3 շահառուի տրամադրվել է սոցիալ-հոգեբանական ծառայություններ՝ խմբային և անհատական

պարապմունքների միջոցով, նպատակ հետապնդելով զարգացնել շահառուների մոտ ինքնասպասարկման, կենցաղավարման, հաղորդակցման և շարժողական հմտությունները: Գործողություն 3-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 4**. Ապահովել ցերեկային կենտրոնում շահառուների զբաղվածությունը տարբեր հմտությունների զարգացնող խմբակներում: Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են արտթերապևտիկ տարբեր խմբակներ, որոնց նպատակն է զարգացնել ստեղծագործական ընդունակությունները, բարձրացնել ինքնագնահատականը, զարգացնել մանր մոտորիկան, զարգացնել թիմում աշխատելու, միմյանց օգնելու կարողությունը: Գործողություն 4-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 5**.

1. 03.12.12թ-ին «Լիարժեք կյանք» ՀԿ-ի կենտրոնում կազմակերպվել է կենտրոնի շահառուների ձեռքի աշխատանքների բաց ցուցադրություն, այն ուղեկցվել է հյուրասիրությամբ և շնորհակալագրերով: Կենտրոնի շահառուների և իրենց ընտանիքի անդամների համար կազմակերպվել է նաև կավագործության վարպետաց դաս:

**Միջոցառում 6.** Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի շահառուների թվով 3 ընտանիքի անդամների համար կազմակերպվել են հետևյալ սեմինարները՝

1. Թեմա՝ «Երեխաների պատկերացումների և գիտելիքների ամրապնդում», վարող, կենտրոնի լոգոպեդ՝ Վեռոնիկա Հարությունյան:
2. Թեմա՝ «Հուզական ինտելեկտի զարգացում երեխաների և մեծահասակների մոտ», վարող, սոցիալական աշխատող՝ Անի Զաքարյան:

**Միջոցառում 7.** Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 7/ հաշվետու ժամանակահատվածում թվով 2 քաղաքացու տրամադրվել է սոցիալ-իրավական, առողջապահական խնդիրներին առընչվող, պետական հավաստագրով աջակցող սարքեր և պարագաների ձեռք բերման և այլ խնդիրներին վերաբերյալ աջակցություն և խորհրդատվություն: Գործողությունը 7-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 8.**

1. 05.11.2024թ-ին կենտրոնի թվով 3 շահառուներ այցելել են Ստեփան Շահումյանի անվան տուն-թանգարան, և ներկա գտնվել հայ ժողովրդական նկարիչ՝ Անտուան Ավետյանի ցուցահանդեսին:

**Միջոցառում 9**. Իրականացվել է ներքի գնահատում (ծրագրի 12-րդ ամսվա ավարտին) և գնահատման պատկերը հաստատական դրական է: Իրականացված գնահատման արդյունքում հստակ և պարզ դարձավ, որ ծրագիրը միանշանակ աջակցում է շահառուներին, այդ են վկայում հարցված շահառուների պատասխանները, ըստ որի դիտվում է 95 % գոհունակությունը ծրագրից ՝ ստացած ծառայություններից, ներառյալ արձանագրված կարողությունների և անկախ կյանքի հմտությունների աճը:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝**

| |
|---|
| Ստորև ներկայացվում է Ստեփանավանի կենտրոնի ամենօրյա աշխատանքները լուսաբանող ֆեյսբուքյան խմբի հղումը<br>https://www.facebook.com/groups/738413854220041 |

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատածում քաղաք դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը**

| |
|---|
| Հաշվետու ժամանակահատվածում դժվարություններ չեն առաջացել: |

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար**

Ծրագրի համակարգող Տ.Ղազարյան

«Լիարժեք կյանք» ՀԿ նախագահ Ս. Մաղաքյան